ռաջնոցն, և վերջնոցս նոյնպէս որպէս զգէշս անկեալ առաջի գազանաց, զի այնպէս գիշատեսս և սարսափելի էր տեսիլ գիշոց նոցա, զի բազումք ի տեսողացն քաղաքացւոց, յորում ի ծառին զնոսա տեսանէին, խելագնայ եղեալ ուշաթափէին և հազիւ ուշաքերեալ ապուշ մնալով գնային ի տունս իւրեանց։ Եւ յետ բանիցս հափս առնել տվին արքային զՁուռնազանն եւ զՂարակեօղ՝ քեխեա Մուրատ փաշային եւ զէկ չաւուշպաշին։ Եւ թագաւորն ասացեալ Ղարակեօղին թէ Դուք չէի՞ք, անիծեա՛լք, որ զԻփշիրն ի կենաց հանեցիք. զնորա մուհասէպէն եւ զՄուրատ փաշային այլ ի քեզանէ կ'առնեմ, այնպէս իմասցիս։ Եւ կու դնէ զայմախամ զծեր Իւսուֆ փաշան և ծառայքն զՍիաւուշ փաշան կ'ուզեն վասն վէզիրութեան։ Եւ թագաւորն զմօհրն առեալ ի Ձուռնազանէն և զզաֆուտանութիւնն այլ առեալ անտի, և զմօհրն հանդերձ խէթիշէրիֆով ուղարկէ ի Սիաւուշն թէ Փութով ժամանես այսր, զի իմ վէզիրն ես։ Եւ օրս մարդ թային արին զափուճիպաշի մի զի զգլուխն և զգանձն բերցեն։ Եւ ի սոյն աւուր առաւօտուն զմուֆտին փոխեցին և եդին զՄէմէքզատէն, և յետ կէս աւուրս զնա ևս փոխեցին և եդին մուֆտի զՀօճազատէն որ ասի Պուռնազ. և փոխեցին օրս զքեխեապէկն և զսէյմէնպաշին և զպաշչաւուշն և զյէնկիչէր աղասին, և թագաւորն զչուխատարն իւր տվեալ աղայութեան. եւ զտէֆտէրտարն փոխեցին և եդին զՄուսթաֆա փաշայի որդին տէֆտէրտարի։ Եւ յՕրթաղափուն կու քոնեն թէ Չչաւուշպաշին կու խեղդենք. կուլայ աղաղակելով թէ Զորդիս կու բերեն ահա՛, տեսնեմ և ապա կամք ձեր լիցի. մինչեւ զորդին կու բերեն, Վազլի փաշան կ'երթայ ի ներսն եւ կու խնդրէ թէ պրծուցանեն, քանզի փեսայ էր չաւուշ՝ առեալ զՍուլթան Իպրահիմին փոքր դուստրն, եւ չաւուշպաշին